Հավելված 7
*ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/02*ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N1

ք. Ճամբարակ «13» մարտ 2018 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի ''Ճամբարակի Առողջության Կենտրոն''ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Արմենակ Մելքումյանի այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Հայկարլի ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի , որը գործում էընկերությանկանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել ենօրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 328100 /երեք հարյուր քսանութ հազար մեկ հարյուր դրամ /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդըձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարմանհամար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<ՃամբարակիԱԿ>>ՓԲԸ ք.Ճամբարակ, ՏիգրանՄեծի 17 <<ՎՏԲՀայաստանբանկ>>ՓԲԸՃամբարակմ/ճ Հ/Հ16023012502500,ՀՎՀՀ08617165 Էլ.փոստ:chambarak@bk.ru Տնօրեն՝ Ա.Մելքումյան ստորագրություն Կ.Տ	«Հայկարլի» ՍՊԸ Ք. Երևան, Կիևյան 18/6 ՎՏԲ-Հայաստան թիվ 03 մ/ճ Հ/Հ 16072018658600, ՀՎՀՀ 00253353 Էլ. Փոստ: haykarli@mail.ru Տնօրեն՝ Է. Հովսեփյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 1
« 13 »03 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								
հերթերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը	մատակարարման		
						հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	79821170	Ամբուլատոր քարտ մեծ	A5 երկկողմանի** 20 թերթ	Հատ	600	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	600	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
2	79821170	Ամբուլատորքարտմանկականտղա	A5 երկկողմանի** 20թերթ	Հատ	100	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	100	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
3	79821170	Ամբուլատորքարտմանկականաղջիկ	A5 երկկողմանի** 20թերթ	Հատ	100	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	100	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
4	79821170	ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձև0002	A4 երկկողմանի	հատ	18000	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	18000	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
8	79821170	Գիրք մատյան բուժհաստատության դեղատներում դեղամիջոցների և ԲՆԱ-ի քանակական	գրասենյակայինգիրք A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունը ոչպակասքան 70% խտությունը 45-50գ/ք.մ200թերթկոշտկազմով	հատ	6	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	6	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
10	79821170	Գիրքմատյանբուժհաստատությանբաժանմունքներ դեղամիջոցներիևԲՆԱ-իքանակականհաշվառման /մուտք, ելք, մնացորդ/ քանակ, գումար/	գրասենյակայինգիրք A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունը ոչպակասքան 70% խտությունը 45-50գ/ք.մ200թերթկոշտկազմով	հատ	10	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	10	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
14	79821170	Դեղատոմսի բլանկներ/նոր ձև N4/	A5 երկկողմանի	Հատ	9000	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	9000	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
21	79821170	Բաժանմունքների քանակա- գումարային հաշվառման գիրք	գրասենյակայինգիրք A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունը ոչպակասքան 70% խտությունը 45-50գ/ք.մ200թերթկոշտկազմով	Հատ	15	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	15	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
22	79821170	Անհատական քարտ հղիին ծննդկանի նոր ձև 2014թ	A4 երկկողմանի 6թերթ	Հատ	200	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	200	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
23	79821170	Հիվանդության պատմագիր ձև 0031 ՈՒ մեծի	A4 երկկողմանի	Հատ	500	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	500	2-3որդեամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների

								կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
24	79821170	Հիվանդության պատմագիր ձև 0031 ՈՒ փոքրի	A4 երկկողմանի,	Հատ	250	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	250	2-3 դեռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
27	79821170	Գինեկոլոգիական ստացիոնար հիվանդների պատմագիր	A4 երկկողմանի 8թերթ	Հատ	50	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	50	2-3 դեռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
32	79821170	Կանխարգելիչ պատվաստումների քարտ ձև N063	A5 երկկողմանի 4 թերթ	Հատ	200	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	200	2-3 դեռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.
34	79821170	Դպրոցականի ձև հավելված3 09.04.2013թ հրաման874 Ա	A4 երկկողմանի 8թերթ	Հատ	500	Ք. Ճամբարակ, Տ. Մեծի 17	500	2-3 դեռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:Ապրանքըմատակարարելիսպետքէունենաորակիսերտիֆիկատ, եթեկիրառելիէ:*

ԳՆՈՐԴ

<<ՃամբարակիԱԿ>>ՓԲԸ
ք.Ճամբարակ, ՏիգրանՄեծի 17
<<ՎՏԲՀայաստանբանկ>>ՓԲԸՃամբարակմ/ճ
Հ/Հ16023012502500,ՀՎՀՀ08617165
Էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան

ստորագրություն
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Հայկարլի» ՍՊԸ
Ք. Երևան, Կիևյան 18/6
ՎՏԲ-Հայաստան թիվ 03 մ/ճ
Հ/Հ 16072018658600, ՀՎՀՀ 00253353
Էլ. Փոստ: haykarli@mail.ru
Տնօրեն՝ Է. Հովսեփյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
« 13» 03 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին ըստ ամիսների՝ ընդորում						
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	Ընդամենը
1	79821170	Ամբուլատոր քարտ մեծ	50%	50%	75%	75%	100%	100%	100%
2	79821170	Ամբուլատորքարտմանկականտղա	50%	50%	75%	75%	100%	100%	100%
3	79821170	Ամբուլատորքարտմանկականաղջիկ	50%	50%	75%	75%	100%	100%	100%
4	79821170	ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձև0002	50%	50%	75%	75%	100%	100%	100%
8	79821170	Գիրք մատյան բուժհաստատության դեղատներում դեղամիջոցների և ԲՆԱ-ի քանակական	50%	50%	75%	75%	100%	100%	100%
10	79821170	ԳիրքմատյանբուժհաստատությանբաժանմունքներումդեղամիջոցներիևԲՆԱ-իքանակականհաշվառման /մուտք, ելք, մնացորդ/ քանակ, գումար/	50%	50%	75%	75%	100%	100%	100%
14	79821170	Դեղատոմսի բլանկներ/նոր ձև N4/	50%	50%	75%	75%	100%	100%	100%
21	79821170	Բաժանմունքների քանակա- գումարային հաշվառման գիրք	50%	50%	75%	75%	100%	100%	100%
22	79821170	Անհատական քարտ հղիին ծննդկանի նոր ձև 2014թ	50%	50%	75%	75%	100%	100%	100%
23	79821170	Հիվանդության պատմագիր ձև 0031 ՈՒ մեծի	50%	50%	75%	75%	100%	100%	100%
24	79821170	Հիվանդության պատմագիր ձև 0031 ՈՒ փոքրի	50%	50%	75%	75%	100%	100%	100%
27	79821170	Գինեկոլոգիական ստացիոնար հիվանդների պատմագիր	50%	50%	75%	75%	100%	100%	100%
32	79821170	Կանխարգելիչ պատվաստումների քարտ ձև N063	50%	50%	75%	75%	100%	100%	100%
34	79821170	Դպրոցականի ձև հավելված3 09.04.2013թ հրաման874 Ա	50%	50%	75%	75%	100%	100%	100%

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*

ԳՆՈՐԴ

<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
գ.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<<ՎՏԲՀայաստանբանկ>>ՓԲԸՃամբարակմ/ճ
Հ/Հ16023012502500,ՀՎՀ208617165
Էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան

ստորագրություն
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Հայկարլի» ՍՊԸ
Ք. Երևան, Կիևյան 18/6
ՎՏԲ-Հայաստան թիվ 03 մ/ճ
Հ/Հ 16072018658600, ՀՎՀՀ 00253353
Էլ. Փոստ: haykarli@mail.ru
Տնօրեն՝ Է. Հովսեփյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 13» մարտ 2018թ. կնքված
ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Հայկարլի» ՍՊԸ
գտնվելու վայրը ք. Երևան,Կիևյան 18/6
ՀՀ 16072018658600
հվհհ 00253353

Պատվիրատու
<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
գտնվելու վայրը ք.Ճամբարակ, ՏիգրանՄեծի 17
ՀՀ 16023012502500
ՀՎհհ 08617165

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«10» «մայիս» 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ տպագրական աշխատանք
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «13» «մարտ» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ *ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/02*
Պատվիրատուն՝ ի դեմս տնօրեն՝ Արմենակ Մելքումյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս Է. Հովսեփյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «__» «___» 201 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Ամբուլատոր քարտ մեծ	A5 երկկողմանի** 20 թերթ	600	600	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	44.0	1-ին կիսամյակ
2	Ամբուլատորքարտմանկականտղա	A5 երկկողմանի** 20թերթ	100	100	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	13.0	1-ին կիսամյակ
3	Ամբուլատորքարտմանկականաղջիկ	A5 երկկողմանի** 20թերթ	100	100	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	13.0	1-ին կիսամյակ
4	ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձև0002	A4 երկկողմանի	18000	18000	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	63.0	1-ին կիսամյակ
5	Գիրք մատյան բուժհաստատության դեղատներում դեղամիջոցների և ԲՆԱ-ի քանակական	գրասենյակայինգիրք A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունըոչպակասքան 70% խտությունը 45-50գ/բ.մ200թերթկոշտկազմով	6	6	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	13.5	1-ին կիսամյակ
6	Գիրքմատյանբուժհաստատությանբաժանմունք ներումդեղամիջոցներիևԲՆԱ-իքանակականհաշվառման /մուտք, ելք, մնացորդ/ քանակ, գումար/	գրասենյակայինգիրք A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունըոչպակասքան 70% խտությունը 45-50գ/բ.մ200թերթկոշտկազմով	10	10	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	22.0	1-ին կիսամյակ
7	Դեղատոմսի բլանկներ/նոր ձև N4/	A5 երկկողմանի	9000	9000	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	19.35	1-ին կիսամյակ
8	Բաժանմունքների քանակա- գումարային հաշվառման գիրք	գրասենյակայինգիրք A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունըոչպակասքան 70% խտությունը 45-50գ/բ.մ200թերթկոշտկազմով	15	15	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	27.0	1-ին կիսամյակ
9	Անհատական քարտ հղիին ծնողական նոր ձև 2014թ	A4 երկկողմանի 6թերթ	200	200	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	9.0	1-ին կիսամյակ
10	Հիվանդության պատմագիր ձև 0031 ՈՒ մեծի	A4 երկկողմանի	500	500	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	37.5	1-ին կիսամյակ
11	Հիվանդության պատմագիր ձև 0031 ՈՒ փոքրի	A4 երկկողմանի,	250	250	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	19.75	1-ին կիսամյակ
12	Գինեկոլոգիական ստացիոնար հիվանդների պատմագիր	A4 երկկողմանի 8թերթ	50	50	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	17.5	1-ին կիսամյակ
13	Կանխարգելիչ պատվաստումների քարտ ձև N063	A5 երկկողմանի 4 թերթ	200	200	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	7.0	1-ին կիսամյակ
14	Դպրոցական ձև հավելված3 09.04.2013թ հրաման874 Ա	A4 երկկողմանի 8թերթ	500	500	1-ին կիսամյակ	10.05.2018թ.	22.5	1-ին կիսամյակ
	Ընդամենը						328.1	

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
ստորագրություն
Ա. Հովսեփյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
ստորագրություն
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.
« 13» մարտ 2018թ. կնքված
ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/02ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հայկարլի» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018թ. 13 մարտին կնքված ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/02 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2018թ. մայիսի 10-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**
Ամբուլատոր քարտ մեծ	600	հատ
Ամբուլատորքարտմանկականտղա	100	հատ
Ամբուլատորքարտմանկականաղջիկ	100	հատ
ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձև0002	18000	հատ
Գիրք մատյան բուժհաստատության դեղատներում դեղամիջոցների և ԲՆԱ-ի քանակական	6	հատ
ԳիրքմատյանբուժհաստատությանբաժանմունքներումդեղամիջոցներիևԲՆԱ-իքանակականհաշվառման /մուտք, ելք, մնացորդ/ քանակ, գումար/	10	հատ
Դեղատոմսի բլանկներ/նոր ձև N4/	9000	հատ
Բաժանմունքների քանակա- գումարային հաշվառման գիրք	15	հատ
Անհատական քարտ հղիին ծննդկանի նոր ձև 2014թ	200	հատ
Հիվանդության պատմագիր ձև 0031 ՈՒ մեծի	500	հատ
Հիվանդության պատմագիր ձև 0031 ՈՒ փոքրի	250	հատ
Գինեկոլոգիական ստացիոնար հիվանդների պատմագիր	50	հատ
Կանխարգելիչ պատվաստումների քարտ ձև N063	200	հատ
Դպրոցականի ձև հավելված3 09.04.2013թ հրաման874 Ա	500	հատ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ա. Հովսեփյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն